



164. ԻՐԵԳ ԿՆԵԳՑ

Մին թաքավրեր իրեք կնեցի ա ինհում պըհելիս, իրեքան էլ
թամբալ: Կնընուցան մինը կյող ա ինում, մինն աշկը տծնս, էն
մինն էլ լուղվանեցյ, Թաքավրերն օրերն էլ միշտ դիլսոր ար
անց կենում: Տըհանցա մոտե յէլ հնրան կնգանը նհետ մին քյա-
սիր մարթ ար ապրում, օրեն հացեն մհճուաչ, բայց միշտ ուրախ:
Էտ քյիսիրին կնեցյը համ շատ զոշմաղ ար, համ էլ գյափուգյուսի
անող, երթ ասող, խաղ ասող, պար կյըմող: Մին խոսկավ ամմեն
հինչ ծըեռքավը կյամ ար: Տրա մարթն էլ շատ ուրախ ար կենում:
Խարարը հսնում ա թաքավրերն, թա քզանա մոտե խոտի մին
մարթ ա ապրում, ինքյը շատ քյասիր, բայց ամմեն օր ըսելիս,
խուսելիս, միշտ ուրախ, օզում ա թա լիհա թոշի: Թաքավրերն ա-
սում ա.—Քյիննական ըմ էտ մարթին տըհսնամ: Տա քյիննամ ա
տըհսնում էտ մարթը համ վար ա անում, նհետն էլ պար կյամ,
պատ շըրելիս համ քար ու ցեխ կըրում, նհետը պար կյամ, հինչ
վրեր անում ա, լոխ պար կյալավ: Հրցըփորց ա անում, ամմեն
հինչ գյուղում, տրան ասում.—Իմ իրեք կնեցյս քեղ պիտի տամ,
քու կնեցյտ յոր օնում: Էտ քյասիրը թա՝ աման շի կյալ: Թաքա-
վրերն ասում ա.—Վըեր փոխես վուշ, կլնիստ կտրըլական ըմ: Էտ
քյասիրը ճարը կտրած, հնրան կնեցյը տամ ա, թաքավրերն իրեք
կնեցյը յոր օնում: Տա թաքավրերն կնանեքյը տանում ա տոն,
տանը մաշան կտրում, էրկու օթաղ շինում, ութաղեն մինին պա-

տերը ծկոտում, մին քանի պըտըրհան պեց անում, հիշքան աման-
շաման կա, պիրում էտ պըտըրհաները լըառում, էն մին ութաղին
էլ էրկու մղակ ա յիրա անում, տհանցա խիլա հեռու վել մին օրիշ
օթաղ շինում:

Մեծես աս ուրան կնանուցը յոր ա օնում, թա տանում ըմ
կյետեն էն զոլին լավ տըեղեր կա, շոռ ածեմ կյետն էլ խիլլա
հեռու վա ինում: Վըեր հանում ըն կյետեն, առաջ կյող կնդանն ա
շիլակում, վըեր անցկըցընե: Հենց վըեր հանում ա վարար, վժժոկ
տըեղը, տա կնդանը հըցընում ա, թորա՞, կնեզյը թա՞ սօրա ետ
թորա: Մարթը տրան անց ա կըցնում կյետեն էն զոլը: Ետ ա
տըեռնում, քյինամ էն աշկը տուն կնդանը շիլակում, պիրում կյե-
տեն վարար տըեղը, հըցընում, թա թորա՞, կնեզյը թա՞ սօրա ետ
թորա: Տրան էլ ա կյետն անց կըցընում: Քյինամ ա լուզվանե
կնդանը շիլակում, պիրում վարար աըեղը, հըցընում, թա՞ թո-
րա՞, կնեզյը թա՞ հինչ ը՞ս ասում է՛, վըեղս կըլիստ, քյակվիս տու,
ճելլ ըրա անց կըցըրու Մարթը տրան շիլական հլորում ա, թում-
փալի քցում կյետը, էտ էրկու կնանուցը յոր օնում, քյինամ տու:
Էն օթաղը, վըեր պատերը ծրկոտալ ա պըտըրհաննե շինալ, աման-
շըմանավ լըցալ, տամ ա կյող կնդանը, ասում:—Ըմընեքյը, տեսը-
տենը հիշքան օզում ըս, կյուղաց, մին պատըրհանան մինը տար,
էն մինան էլ՝ էն մինը: Էն մին օթաղն էլ, վըեր էրկու մղակ ա
ինձեմ պեցած, տամ ա էն մին կնդանը, ասում:—Միրական ըս
պիրիլական, թա հի՞նչ ըս ըննական, տու վըս գյունդում, մին
մղակավը օթաղըտ կըպիրիս, էն մինավը՝ հղե տինիս:

Տրանա ետը տահանք ուրանց խըսյաթը թողում ըն, խըլոմ-
քանում, լավ, զոչնաղ կնանեքյ տըեռնում:

Մին օր էտ մարթն ասում ա:—Քյինանական ըմ թաքավըերեն
կոշտը, տըեսնամ կնեզյո նրա քշտին հունց ա: Քյինամ ա տըես-
նում ուրան քյունչա կնեզյը թաքավըերեն քշտին թիմըլացած,
տըեռած մին ալանգյա: Թաքավըերը տրան ասում ա:—Կնանեքյս
ինձ տո, կնեզյտ տար: Էտ քյասիրը թա՞ կարել լըմ:

